12). որուն յիշատակարանէն կը քաղենք հետեւեալը. «Ցամի ուլթ հարիւրերորդի քառասներորդի երկրորդի. թվաբերութեանս հայկազուն սեռի։ եկն արքեպսն. Եմայ. Տէր Սարգիս վկայեալն ի բազմաց բարեփառ առաջնորդութեամբ և առաքինազարդ վարուք. հանդերձ եղբարբ իւրով Յովհաննէսիւ աստուածամերձ կրաւնաւոր քահիւ. յաշխարհս Հոնաց. յաստուածապահ քաղաքս Կաֆայ նուիրակութեան աղագաւ տէր Թէոդորոս կաթողիկոսի. ետես զսբ. տառս. որ կոչի տարոյգիրք. և ցանկացաւ գեղոյ սորա. որ էր բարեսէր և երիտասարդ քահանային Մանուէլի ստացեալ յարդար վաստակոց իւրոց. և ի կատարման սորա փոխեալ առ Քս. յոյսն ամենեցուն. և մնացեալ տառս առ Հովիսիմէ երիցակինն և առ տիրամայր քոյր քահին. և դստերն իւրոյ աւագ տիկնայ, խնդրեցին ի սոցանէ զսբ. տառս վասն Եմայ՝ յիշատակ Մանուէլ քահ.ին և իւրեանց. և սոքա ետուն յաւժար կամաւք. որ ընթեռնուն ի սբ. վանքն որ է յԵմս. ի սբ. Յակոբ. որ յար ընթերցմամբ յիշատակին առաջի Ս.յ. և որ սրտի մտաւք յիշեսցեն զսոքա ամի ամի կարգալով. յիշեսցին և նոքա, առաջի ատենին Քի. որում փառք յաւիտեանս ամէն. զԱնդրէասն գաւակաւք իւրովք յիշեցէք ի Քս.»։ Սարգիս պտրք. Ս. Յակոբի վանքին մէջ ՊԽԸ (= 1399) թուին ընդօրինակած է Մեկն. Կարողիկ թղթոց Սարգսի Շնորհալւոյ ձեռագիրը, որ այժմ կը գտնուի Ս. Յակոբի մատենադարանը (Թ. 7). Յիշատակարանին մէջ կը յիշուին եղբայրը Յովհաննէս փակակալ, ձեռագրին ծաղկողը Տաւնական կրաւնաւոր և թղթին կոկող Սահակ աբեղան։ Սաւալան կը կարծէ թէ (էջ 627-628) Սարգիս պտրք. եպիսկոպոսութեան աստիճանը ստացած է Թէոդորոս կթղ.էն Ս. Յակոբի մէջ, վասնզի Թէոդորոս՝ ըստ յիշատակարանի (ՄՁ. Թ. 12) ներկայ էր այն խորհրդակցութեան որուն համաձայն պաշտօն տրուեցաւ Սարգսի, իր եղբօրը՝ աւագ Լս. Յովհաննէսի հետ նուիրակութեան երթալու Խլիմ։

ՍԱՐԳԻՍ ՊԵ.— (1507—1523). Սուլթան Սէլիմ Երուսաղէմը Եգիպտացիներէն գրաւելով՝ առաջին անգամ հրովարտակ կը շնորհէ հայոց Սարգիս պտրք.ին՝ Ապգ. Ս. Տեղեաց սեփականութեան հաստատման համար, համաձայն հին հրովարտակներու (Ցպհ. էջ 51)։